

նակ գտանիցէ: Իսկ այս յարմարութիւնս ոչ լինի առանց մերձեցման առ Աստուած: Իսկ առ Աստուած մերձենալն՝ աղօթիւք լինի. ըստ որում սոյն Գիորնէսիոսի ի գիրս Աստուածային Անուանց թէ նախ քան զամենայն եւ յաւէտ քան զաստուածաբանութեան՝ յաղօթից սկսանել պարտ է. զի աղօթքն է որպէս բանալի, որով կարեմք բանալ զամենայն գանձս Աստուծոյ եւ անտի առնուլ որ ինչ օգտակար թուեսցէ մեզ ի փրկութիւն:

Ուստի եւ իմս ստրկութիւն՝ բաղձանս ունելով այսպիսի լիազուծի աստուածաբանութեան շտեմարանի ստացման, յոչ լինելն ձեռնհաս, յաղօթս ապաւինեալ երկիւղած մտօք եւ Փրկիչն իմ Յիսուս, որ զկամս երկիւղածաց առնէ եւ աղօթից նոցա լսէ եւ կեցուցանէ, որ յամենայն լէւրն ինչ եւ յամենայն ժամ լսուի իմոյ եւ անդին մարգարտիս արար զիս արժան. զի գրեթէ սա է ամենունակ գանձարան եւ ամենաբարի մառան եւ ամենայն մրգաց եւ ծաղկանց մենարան. Ինչպէս եւ ի մէջ ծաղկանց զէղիծն ունի բոսորաց եւ ի մէջ մրգաց զամեն ձեռնալ եւ զամեն ի մաքրելոյն ուրախ բոցիւն, բայց չէ զարմանք զի եւ ներ տապանին Նոյի՝ գազանքն ընդ սուրբ կենդանեաց խառնէին եւ ոչ տաղաւարն Աբրահամու ի Հագարայ զրկեցեալ, եւ ոչ դաւթն Առաքելոյ՝ ի Յուդայէ. զի թէպէտ եւ ծիրանին գոյն՝ ըստ ինքեան իցէ գեղեցիկ, բայց եւ երբեմն ընդ թխագունի սեւոյ ցանկի յոստայնանկաց. որ թէպէտ եւ ըստ ինքեան զոչինչ ի ծիրանոյն պայծառութենէ շահի սեւան, բայց զծիրանին պայծառ եւս ցուցանէ. որպէս եւ ի մառախլապատ երկնի շողն արեգին զաղեղն ճաճանչաւոր եւ բազմագունակ յօրինէ: Իսկ թէ բարեգունի եւ աննախանձ վերձանողի սոյն մենարանս աստուածաբանութեան դիպեացի, որպէս ի Մայիս ամսեանն զցօղոյ շիթս յերկնից ընկալեալ զգեղեցկատեսիլ